



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. փետրվարի 10-ի թիվ 3/Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
(ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ, ՎՆԱՍԱՋԵՐԾՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ, ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ)
ՆԿԱՏԱՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների
օգտագործման (վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում)
նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԶԱՐՅԱՆ



Հավելված

Հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի

2012թ. փետրվարի 10-ի թիվ 3/4 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀԱՅԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների օգտագործման (վերամշակում, վնասագերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում) նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

Վերահսկողության հիմքը՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2011 թվականի գործունեության տարեկան ծրագրի 13-րդ կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011թ. նոյեմբերի 7-ի թիվ 28/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Արտադրության և սպառման ընթացքում գոյացած վտանգավոր թափոնների օգտագործման (վերամշակում, վնասագերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում) օրինականությունը:

Վերահսկողության առարկան՝ Վտանգավոր (բացառությամբ ռադիոակտիվ) թափոններ օգտագործող կազմակերպությունների և թափոնների կառավարման ոլորտում լիազորված պետական կառավարման մարմինների գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության օբյեկտներ՝ ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2011թ.-ի նոյեմբերի 8-ից մինչև 2012թ. մարտի 31-ը:

Վերահսկողությամբ ընդգրկող ժամանակահատվածը՝ 2009թ.-ի հունվարի 1-ից մինչև 2011թ.-ի դեկտեմբերի 31-ը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության ձևերը, համապատասխանության տեսակը: Վերլուծություն

իրականացվել է ընտրանքային կարգով ընտրված ոլորտներում՝ դիտարկման արդյունքների հիման վրա:

Վերահսկողության արդյունքները՝

Վտանգավոր քափոնների հաշվառումը

Արտադրության և սպառման ընթացքում գոյացած քափոնների (բացառությամբ ռադիոակտիվ) հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահամման, հեռացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով: Վտանգավոր քափոնների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 20.05.2004թ. թիվ 874-Ն որոշմամբ, իսկ ըստ վտանգավորության դասակարգված քափոնների ցանկը՝ ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ. թիվ 430-Ն հրամանով:

Թափոնների հաշվառումն իրականացվում է ՀՀ կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 1739-Ն որոշման համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, կազմակերպությունների ներկայացրած «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև-1 «Թափոն» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալների հիման վրա: ՀՀ բնապահպանության նախարարություն քափոնների վերաբերյալ տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություններ ներկայացրել են 2009թ-ին՝ 633, իսկ 2010թ-ին՝ 678 կազմակերպություն: Վտանգավոր քափոններ առաջացել են 2009թ-ին՝ 392, իսկ 2010թ-ին՝ 406 կազմակերպություններում, դրանց առաջացրած վտանգավոր քափոնները կազմել են 2009թ.-ին՝ 47,630.1 տոննա, իսկ 2010թ.՝ 48,297.7 տոննա: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների միայն արդյունաբերությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների թիվը կազմել է շուրջ 2500, որոնց ընդամենը 7 տոկոսն է ներկայացրել վտանգավոր քափոնների վերաբերյալ հաշվետվություն: Սակայն ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից լիարժեք չեն կատարվել ՀՀ կառավարության 25.07.2002թ. «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1149-Ն որոշման հավելված 1-ի 8-րդ կետի պահանջները. պատշաճ հսկողություն չի իրականացվել վտանգավոր քափոնների գործածության համար սահմանված նորմերի, բնապահպանական վարչական վիճակագրություն վարելու և հաշվետվություններ ներկայացնելու կարգի պահպանման նկատմամբ: Արդյունքում չի կիրառվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ

օրենսգրքի 169.19-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ վարչական վիճակագրական հաշվետվություն չներկայացնելն առաջացնում է մինչև 150.0 հազ. դրամ տուգանքի նշանակում:

Վտանգավոր թափոնների գործածության մասին տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ոլորտների ներկայացված են հավելված 1-ում և հավելված 2-ում:

Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման դիմաց վճարի դրույքաչափերը սահմանվել են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով՝ յուրաքանչյուր տոննայի համար, ըստ վտանգավորության դասակարգման սահմանելով 1500 դրամից մինչև 48000 դրամ: Արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման (պահման) դեպքում դրույքաչափը կիրառվում է ըստ տեղադրման ժամանակահատվածի՝ 500 դրամից մինչև 48000 դրամ: Վտանգավոր թափոնների տեղադրման դիմաց բնապահպանական վճարները կազմել են՝ 2009թ.՝ 30,723.2 հազ. դրամ, 2010թ.՝ 35,402.3 հազ. դրամ: Վտանգավոր թափոնների համար բնապահպանական վճարների մասին տվյալներն ըստ ՀՀ մարզերի ներկայացված է հավելված 3-ում:

ՀՀ բնապահպանության մախարարության կողմից 2009թ.-ին՝ հաշվառվել են 39 թափոնների անձնագրեր 10 կազմակերպությունների, 2010թ.-ին՝ 85 անձնագրեր 32 կազմակերպությունների, իսկ 01.10.2011թ. դրությամբ՝ 239 անձնագրեր 78 կազմակերպությունների համար, այն դեպքում, երբ վտանգավոր թափոնների վերաբերյալ տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություններ ներկայցրել են 2009թ.-ին՝ 433, իսկ 2010թ.-ին՝ 372 կազմակերպություն: Այսպիսով, վտանգավոր թափոններ առաջացնող կազմակերպությունների 79 տոկոսը խախտել են ՀՀ կառավարության 19.01.2006թ. «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» թիվ 47-Ն որոշման պահանջը՝ վտանգավոր թափոնների անձնագրեր չեն կազմվել և ՀՀ բնապահպանության մախարարություն համաձայնեցման չեն ներկայացվել, իսկ Տեսչության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել:

30.01.2003 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասագերծման կամ պահպանման կամ փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշումը, որի համաձայն թվով 6 կազմակերպությունների ՀՀ կառավարության որոշումներով տրամադրվել են վտանգավոր թափոնների միայն վերամշակման, վնասագերծման լիցենզիաներ, իսկ վտանգավոր թափոնների պահպանման, կամ փոխադրման և տեղադրման համար լիցենզիաներ չեն տրամադրվել: Վտանգավոր թափոնների փոխադրում առանց

համապատասխան լիցենզիայի բացի այդ կազմակերպություններից իրականացրել են 2009թ. ևս թվով 13, իսկ 2010թ.՝ թվով 16 կոմունալ սպասարկման կազմակերպություններ: Լիցենզավորված գործունեություն կատարելու համար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 12-րդ մասի՝ լիցենզիայի տրամադրման համար պետական տուրքը սահմանվել է տարեկան 200.0 հազ.դրամ:

**Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների
գործունեությունը վտանգավոր թափոնների օգտագործման ոլորտում**

Թափոնների գործածության ոլորտում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները սահմանվել են «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով: Տարածքային կառավարման մարմինները պետք է կազմեն և վարեն թափոնների գոյացման, մշակման, օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի գրանցամատյանները: Լիազորված պետական մարմինների (ՀՀ բնապահպանության նախարարության, իսկ ընդերքում տեղադրման դեպքում՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության) հետ համաձայնեցված պետք է իրականացնեն թափոնների տեղադրման վայրերի թույլտվությունների տրամադրումը, կազմակերպեն թափոնների հաշվառումը, անձնագրավորումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվել են նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, ըստ որի համայնքի ղեկավարը պետք է վարի համայնքի քաղաքաշինական, բնապահպանական կադաստրները, իսկ 45-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունն է հողի պահպանությունը քիմիական նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից: Սակայն, օրենքով սահմանված վերոհիշյալ իրավասություններն ու լիազորությունները լիարժեք չեն կատարվում: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների օրենքով սահմանված կարգով պետական գրանցում են ստացել ընդամենը 30 աղբավայրեր, իսկ օրինակ, Արագածոտնի մարզի Օջական համայնքի վարչական տարածքում՝ Աշտարակ-Էջմիածին մայրուղու հարևանությամբ, 1.58 հա մակերեսով աղբավայրի հողատարածքը ոչ միայն չունի պետական գրանցում, այլ նաև հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության արոտավայր:

Թափոնների օգտագործման համար լիցենզիան տրամադրում է ՀՀ կառավարությունը՝ ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացմամբ, իսկ վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքօգտագործման հատուկ թույլտվությունը՝ ՀՀ էներգետիկայի

նախարարության առաջարկությամբ (թույլտվության տրամադրման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 22.02.2007թ. թիվ 228-Ն որոշմամբ):

Համայնքների տարածքների աղբավայրերում առկա են ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 342-Ն հրամանով հաստատված ցանկում ներառված վտանգավորության աստիճան ունեցող թափոններ (մշտական և ժամանակավոր բնակության վայրերից, ինչպես նաև կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբն ունի 4-րդ դասի վտանգավորության աստիճան): Սակայն, համայնքների կամ աղբավայրեր (թափոնակուտակիչներ) օգտագործողների (օպերատորների) կողմից գործունեությունն իրականացվել է առանց լիցենզիայի, իսկ թափոնների թաղման դեպքում՝ առանց ընդերքօգտագործման հատուկ թույլտվության: Մասնավորապես, Երևան քաղաքի վարչական շրջաններում առանց լիցենզիայի կոմունալ սպասարկում իրականացնող կազմակերպություններից և ոչ մեկը թափոնների մասին վարչական վիճակագրական հաշվետվություն չի ներկայացրել և բնապահպանական վճարներ չեն վճարվել, այն դեպքում, երբ միայն Նուբարաշենի 52.3 հա մակերեսով աղբավայրի տարածքում օրական տեղադրվում է միջինը 750.0 տոննա կամ տարեկան 275.0 հազ. տոննա աղբ, այդ թվում նաև վտանգավոր թափոններ:

Լիազորված և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լիարժեք չեն կատարվել ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջները: Չի կատարվել ՀՀ կառավարության 13.07.2006թ. «Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջը՝ ըստ որի, ռեեստրում գրանցման ենթակա են 25.0 քառ. մ-ից ավելի տեղադրման մակերեսով թափոնների թաղման, վնասագերծման և ոչնչացման օբյեկտները: Խախտվել են «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 36-րդ, «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 51-րդ հոդվածների պահանջները՝ տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների հետ համաձայնեցված հսկողություն չեն իրականացրել բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ, չեն արձանագրվել խախտումները, չեն կիրառվել պատժամիջոցներ:

Վտանգավոր թափոնների գործածությունն ըստ ոլորտների

1. Թռչնաբուծություն

Արտադրության և սպառման թափոնների հիմնական տեսակների գոյացման տեսակարար ցուցանիշները հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և հաստատվել 19.11.2009թ. թիվ 48 արձանագրությամբ: Այդ ցուցանիշները սահմանվել են որպես միջին վիճակագրական և միջին ճյուղային տվյալներ:

Մասնավորապես, թռչնաբուծություն իրականացնող կազմակերպություններում, որպես վտանգավոր թափոն առաջացող թռչնի ծերտի տեսակարար ցուցանիշը կազմում է 5 տոկոս՝ թռչնի օրական քաշից: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների թռչնաբուծությամբ զբաղվող 7 խոշոր կազմակերպություններում թռչունների տարեկան միջին քանակը կազմել է 3,035.0 հազ. հատ: Մեկ թռչնի միջին քաշն ամգամ 1.0 կգ ընդունելու դեպքում միայն թռչնի ծերտը՝ ըստ տեսակարար ցուցանիշների, պետք է կազմեր օրական 151.7 տոննա, իսկ տարեկան կտրվածքով կառաջանա շուրջ 55,370.0 տոննա 4-րդ դասի վտանգավորության թափոն: Մինչդեռ ըստ վարչական վիճակագրական հաշվետվությունների այդ կազմակերպությունները առաջացրել են 13.8 տոննա վտանգավոր թափոններ, իսկ վճարված ընդհանուր բնապահպանական վճարը կազմել է տարեկան ընդամենը 100.0 հազ.դրամ:

2. Առողջապահության բնագավառ

Թափոնների օգտագործման ընթացքում մարդու օրգանիզմի վրա վնասակար ու վտանգավոր ազդեցության բացառման նպատակով սանիտարական նորմերի ու կանոնների, հիգիենիկ նորմատիվների մշակումը և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարությունը: Այդ նպատակով ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008թ. թիվ 03-Ն և 29.10.2009թ. թիվ 20-Ն հրամաններով հաստատվել են բժշկական թափոնների և վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը ներկայացվող պահանջները: Ըստ սանիտարական կանոնների և նորմերի առողջապահական կազմակերպություններում բժշկական թափոնների մինչև 15 տոկոսը կազմում են վտանգավոր թափոնները:

Թափոններ առաջացնող առողջապահական կազմակերպությունները վտանգավոր թափոնների վնասագերծման, բժշկական թափոնները ոչնչացնելու համար պայմանագրերը կնքել են ՀՀ

կառավարության որոշումներով վտանգավոր թափոնների վնասագերծման լիցենզիա ստացած թվով 3 կազմակերպությունների՝ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ (ՀՀ կառավարության 26.01.2009թ. թիվ 449-Ա որոշում), «Առողջության զարգացման կենտրոն» ՍՊԸ (ՀՀ կառավարության 24.12.2009թ. թիվ 1494-Ա որոշում) և «Ջինջեկո» ՍՊԸ (ՀՀ կառավարության 19.02.2009թ. թիվ 150-Ա որոշում) հետ:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների 31.12.2011թ. դրությամբ, լիցենզավորված 2793 առողջապահական կազմակերպություններից թափոնների ոչնչացման, վնասագերծման նպատակով վերոհիշյալ կազմակերպությունների հետ հիմնականում պայմանագրեր են կնքել թվով 330 խոշոր բազմապրոֆիլ և մասնագիտացված հիվանդանոցներ, առողջության կենտրոններ (դրանց առաջացրած բժշկական թափոնները կազմում են առողջապահական կազմակերպությունների ընդհանուր թափոնների շուրջ 77.0 տոկոսը): Սակայն, վտանգավոր թափոնների փոխադրումը «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ, «Առողջության զարգացման կենտրոն» ՍՊԸ և «Ջինջեկո» ՍՊԸ կողմից 2009 և 2010 թվականներին իրականացվել է առանց համապատասխան լիցենզիաների:

Խախտվել է ՀՀ կառավարության 30.01.2003թ. «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն որոշման այդ ժամանակահատվածում գործող պահանջը:

«Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություններ ներկայացրել են 2009թ-ին՝ 118, իսկ 2010թ.-ին՝ 123 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր: 2009 թ-ին առաջացել են 951.1 տոննա, իսկ 2010 թ-ին 979.9 տոննա 3-րդ և 4-րդ դասի վտանգավորության թափոններ: Այսպիսով, առողջապահական կազմակերպությունների ընդամենը 4.4 տոկոսն են ներկայացրել վարչական վիճակագրական հաշվետվություններ, որը նախատեսված է ՀՀ կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 1739-Ն որոշման պահանջով:

3. Ժամկետանց թունաքիմիկատներ և քիմիական թափոններ

Ժամկետանց թունաքիմիկատները և քիմիական թափոնները հիմնականում տեղադրված են Նուբարաշենի թունաքիմիկատների (512 տոննա՝ հիմնականում Դ-Դ-S) և Ալավերդի քաղաքի մկնդեղ պարունակող թունաքիմիկատների (50 տոննա) գերեզմանոցներում: Շուրջ 100,0 տոննա թունաքիմիկատներ և ժամկետանց քիմիական թափոններ գտնվում են նախկինում, մինչև

սեփականաշնորհումը, ՀՀ գյուղատնտեսության մախարարության համակարգում գործող «Բերրիություն» և «Ագրոսպասարկում» ձեռնարկությունների շրջանային պահեստներում, որոնցից առավելագույն քանակությունը տեղաբաշխված է Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում՝ 51,0 տոննա և Արարատի մարզի Երասխա համայնքում՝ 21,0 տոննա: Թափոնների պահպանումը կազմակերպությունների կողմից իրականացվում է առանց համապատասխան լիցենզիայի: Խախտվել է նաև «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը՝ վտանգավոր օբյեկտները չեն հաշվառվել ՀՀ արտակարգ իրավիճակների մախարարության ռեեստրում:

4. Ընդերքօգտագործման հարստացուցիչ ձեռնարկությունների պոչամբարներ և թափոնակույտեր

ՀՀ տարածքում առկա են հարստացուցիչ ձեռնարկությունների թվով 19 պոչամբարներ, որոնցից 10-ը կոնսերվացված են: Պոչամբարներում և դրանց կից տարածքներում առկա ապարային թափոնակույտերում կուտակված թափոնների վտանգավորության դասը որոշելու համար ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների մախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների մախարարությունների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել, իսկ հարստացուցիչ ձեռնարկությունների կողմից ՀՀ բնապահպանության մախարարություն ներկայացվող թափոնների մասին տարեկան հաշվետվություններում թափոնները ներկայացվել են կամ որպես ոչ վտանգավոր, կամ ընդհանրապես պոչամբարների պարունակությունը որպես թափոն չի դիտարկվել: Արդյունքում որևէ բնապահպանական վճար չի վճարվել:

ՀՀ կառավարության 18.02.1995թ. «ՀՀ տարածքում առկա պոչամբարների և ապարային թափոնակույտերի անվտանգության ապահովման միջոցառումների մասին» թիվ 84 որոշմամբ պոչամբարների և ապարային թափոնակույտերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման, անվտանգության ապահովման և բնապահպանական միջոցառումների մշակման ու իրականացման հետ կապված աշխատանքների կոորդինացումն ու ՀՀ կառավարության որոշման կատարման վերահսկողությունը դրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների մախարարության վրա: Սակայն պոչամբարներում առկա վտանգավոր նյութերի կազմը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն մախարարության կողմից վարվող արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում որպես տեխնիկատեխնոլոգիական տվյալ չի հաշվառվել:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Խախտվել է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից լիարժեք չեն կատարվել ՀՀ կառավարության 25.07.2002թ. «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1149-Ն որոշման հավելված 1-ի 8-րդ կետի պահանջները, պատշաճ հսկողություն չի իրականացվել վտանգավոր թափոնների գործածության համար սահմանված նորմերի, բնապահպանական վարչական վիճակագրություն վարելու և հաշվետվություններ ներկայացնելու կարգի պահպանման նկատմամբ:
2. Վտանգավոր թափոններ առաջացնող կազմակերպությունների 79 տոկոսը խախտել են ՀՀ կառավարության 19.01.2006թ. «Թափոնների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» թիվ 47-Ն որոշման պահանջը՝ վտանգավոր թափոնների անձնագրեր չեն կազմվել և ՀՀ բնապահպանության նախարարություն համաձայնեցման չեն ներկայացվել:
3. Խախտվել են «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 30.01.2003թ. «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 121-Ն և թափոնների թաղման նպատակով ընդերքօգտագործման հատուկ թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին 22.02.2007թ. թիվ 228-Ն որոշումների պահանջները: Թափոններ վնասազերծող, ոչնչացնող, ինչպես նաև կոմունալ սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպությունների կողմից թափոնների փոխադրումը և տեղադրումն իրականացվել է առանց համապատասխան լիցենզիաների, իսկ թաղման դեպքում առանց ընդերքօգտագործման հատուկ թույլտվությունների:
4. Խախտվել են «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 36-րդ, «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի 51-րդ հոդվածների պահանջները՝ տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի նախարարությունների հետ համաձայնեցված հսկողություն չեն իրականացրել բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ, չեն արձանագրվել խախտումները, չեն կիրառվել պատժամիջոցներ:

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից չի կատարվել ՀՀ կառավարության 13.07.2006թ. «Թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը սահմանելու մասին» թիվ 1180-Ն որոշման պահանջը՝ աղբավայրերը, թափոնների թաղման, վնասագերծման և ոչնչացման օբյեկտները ռեեստրում չեն գրանցվել:
6. Թռչնաբուծությամբ զբաղվող 7 խոշոր կազմակերպություններում թռչունների տարեկան միջին քանակը կազմել է 3,035.0 հազ. հատ: Ըստ հաշվարկների, տարեկան կտրվածքով, միայն թռչնի ծեռտից առաջանում է շուրջ 55,370.0 տոննա 4-րդ դասի վտանգավորության թափոն: Մինչդեռ, ըստ վարչական վիճակագրական հաշվետվությունների, այդ կազմակերպությունները առաջացրել են 13.8 տոննա վտանգավոր թափոններ, որի համար վճարված ընդհանուր բնապահպանական վճարը կազմել է տարեկան ընդամենը 100.0 հազ.դրամ:
7. Խախտվել է ՀՀ կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» թիվ 1739-Ն որոշման պահանջը: Լիցենզավորված 2793 առողջապահական կազմակերպությունների միայն 4.4 տոկոսն է ներկայացրել «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն: Թափոնների վնասագերծումը, ոչնչացումը մասնագիտացված լիցենզավորված կազմակերպությունների միջոցով իրականացնում են հիմնական թափոններ առաջացնող 330 բազմապրոֆիլ և մասնագիտացված հիվանդանոցները, որը կազմում է առողջապահական կազմակերպությունների 12.0 տոկոսը:
8. Ժամկետանց թունաքիմիկատները և քիմիական թափոնների պահպանումը իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներով: Չի կատարվել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը՝ վտանգավոր օբյեկտները չեն հաշվառվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ռեեստրում:
9. ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել հարստացուցիչ ձեռնարկությունների պոչամբարներում կուտակված թափոնների վտանգավորության դասը որոշելու համար: Հարստացուցիչ ձեռնարկությունների կողմից ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացվող թափոնների մասին տարեկան հաշվետվություններում թափոնները ներկայացվել են կամ որպես ոչ վտանգավոր, կամ

ընդհանրապես պոչամբարների պարունակությունը որպես թափոն չի դիտարկվել: Արդյունքում որևէ բնապահպանական վճար չի վճարվել:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ կառավարությանը՝

1. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ՝ օրենքում օգտագործվող հասկացությունները համապատասխանեցնել «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված հասկացություններին՝ հստակ նշելով հարստացուցիչ ձեռնարկությունների պոչամբարներում թափոնների տեղադրման դեպքում բնապահպանական վճարի դրույքաչափերը:
2. Լրամշակել բնապահպանական օրենսդրության նորմերը, մասնավորապես վերանայել կոմունալ թափոնների փոխադրմանը ներկայացվող պահանջները, պարզեցնել թափոնների անձնագրավորման և սկզբնական հաշվառման ընթացակարգերը:

ՀՀ բնապահպանության նախարարությանը՝

1. Պարբերաբար իրականացնել աղբավայրերի բնապահպանական մոնիտորինգ և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն աղբավայրերը ենթարկել բնապահպանական փորձաքննության:
2. Պոչամբարների պարունակության անալիզների հիման վրա հստակեցնել դրանցում կուտակված թափոնների վտանգավորության դասը և առանձին ծածկագրով ներառել ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ. «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 342-Ն հրամանով հաստատված ցանկի հանքային ծագում ունեցող թափոնների կազմում:

ՀՀ առողջապահության նախարարությանը՝

1. Հետևողական լինել ՀՀ բնապահպանական օրենսդրության, բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարման նկատմամբ: Վտանգավոր թափոնների մասով լրամշակել սպառման թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝

1. Արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում որպես տեխնիկատեխնոլոգիական տվյալ նշել նաև պոչամբարներում առկա վտանգավոր նյութերի կազմը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 09.11.2006թ. «Օգտակար համաձոնների որակական անալիտիկ տվյալների հսկողության մասին» թիվ 1678-Ն որոշմամբ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության համակարգի «Անալիտիկ» ՓԲԸ-ի կողմից պոչամբարներում իրականացվող հսկողական անալիզների տվյալները: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.02.2006թ. «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշմամբ հաստատված ցանկում՝ պոչամբարների մասով կատարել համապատասխան լրացումներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝

1. Իրականացնել հսկողություն համայնքների կողմից աղբավայրերի հաշվառման, անձնագրավորման, թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցման, ինչպես նաև թափոնակուտակիչների անշարժ գույքի պետական գրանցման և հողամասերի նպատակային օգտագործման նկատմամբ:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Աղտաղբության և սպառման վտանգավոր թափոններն ըստ մարզերի

տոննա

Մարզ	Կազմակերպությանների թիվը		Առաջացել են թափոններ		վնասագերծված է կազմակերպության կողմից		վերանշակված թափոններ	
	2009թ.	2010թ.	2009թ.	2010թ.	2009թ.	2010թ.	2009թ.	2010թ.
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	16	36	59.4	167.0		5.4		4.0
ԱՐԱԳԱԾՈՏՆ	81	59	470.5	425.2		0.8		
ԱՐԱՐԱՍ	11	11	0.2	0.3				
ԱՐՄԱՎԻՐ	8	7	39.3	87.9	0.6		0.8	
ԼՈՍԻ	32	33	30,398.3	30,782.5	9.3	9.3	70.9	1.3
ՍՅՈՒՆԻՔ	3	5	449.5	1,733.8	6.9	0.7	8.7	40.4
ՏԱՎՈՒՇ	7	6	3.0	360.5				
ՎԱՅՈՑ ՉՈՐ	10	5	426.4	35.1				
ԿՈՏԱՅՔ	6	9	620.5	1,159.5			122.4	111.1
ՇԻՐԱԿ	43	51	2,842.5	198.8	2.0			
ԵՐԵՎԱՆ	175	184	12,320.5	13,347.1	436.9	284.1	2,136.6	2,129.4
Ընդամենը	392	406	47,630.1	48,297.7	455.7	300.3	2,339.4	2,286.2

Արտադրության և սպառման վտանգավոր բաղիմները ըստ տնտեսության ճյուղերի

	2009թ.		2010թ.	
	Կազմակերպությունների թիվը	Առաջացել են վտանգավոր բաղիմները	Կազմակերպությունների թիվը	Առաջացել են վտանգավոր բաղիմները
Գյուղատնտեսություն, անասնաբուծություն և ձկնորսություն	2	6.1	3	13.7
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	8	30,879.3	9	32,489.4
Մշակող արդյունաբերություն	124	11,471.8	129	12,578.6
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	16	115.0	23	133.6
Շինարարություն	43	732.8	36	666.0
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	7	260.6	9	448.3
Առողջապահություն և բնակչության աղիակական սպասարկում	118	951.1	123	979.9
Այլ	74	3,213.2	74	988.3
Հոգումներ	392	47,630.1	406	48,297.7

Վտանգավոր թափոնների առաջացման և տեղադրման համար վճարված բնապահպանական վճարները

Մարզ	Կազմակերպությունների թիվը		Վտանգավոր թափոնների			
			Ծավալը տոննա		Վճարված բնապահպանական վճարը հազ.դրամ	
			2009թ.	2010թ.	2009թ.	2010թ.
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	360	434	1,696.7	1,504.5	2,303.3	2,188.0
ԱՐԱԳԱԾՈՏՆ	349	333	735.3	780.9	1,203.9	1,323.5
ԱՐԱՐԱՏ	15	14	795.2	908.7	1,192.9	1,363.0
ԱՐՄԱՎԻՐ	21	23	673.5	164.9	261.6	292.3
ԼՈՒԻ	225	199	105.9	169.9	204.6	340.5
ՍՅՈՒՆԻՔ	9	11	115.5	449.6	174.9	672.5
ՏԱՎՈՒՑ	144	166	296.0	422.0	444.0	635.7
ՎԱՅՈՑ ՉՈՐ	16	13	234.8	161.6	457.3	347.5
ԿՈՏԱՅՔ	220	220	168.7	996.9	835.8	1,779.0
ՇԻՐԱԿ	219	226	161.5	207.0	712.4	921.4
ԵՐԵՎԱՆ	566	559	11,087.8	12,201.1	22,932.5	25,538.9
Ընդամենը	2144	2198	16,070.9	17,967.1	30,723.2	35,402.3



ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ. փոստ /E-mail/ էլ. почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
☎ (374 10) 54 08 57

№

‘ ’ _____ 2012 թ.

Հայաստանի Հանրապետության
վերահսկիչ պալատի նախագահ
պարոն Ի. Զաքարյանին

Հարգելի պարոն Զաքարյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 27.02.2012թ. թիվ 02/23.14/2449-12 հանձնարարականի՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. փետրվարի 10-ի թիվ 3/4 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների օգտագործման /վերամշակման, վնասագերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում/ նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության>> վերաբերյալ, ՀՀ բնապահպանության նախարարությունը քննարկելով հաշվետվության մեջ նշված դիտողությունները՝ ստորև ներկայացնում է իր պարզաբանումները:

Հարստացուցիչ ձեռնարկությունների պոչամբարներում թափոնների տեղադրման դեպքում բնապահպանական վճարներ սահմանելու վերաբերյալ հայտնում են, որ վճարները սահմանված են համաձայն <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> ՀՀ օրենքի՝ արտադրության և սպառման թափոնները սահմանված կարգով շրջակա միջավայրում տեղադրելու համար: <<Թափոնների մասին>> ՀՀ օրենքի համաձայն թափոնի տեղադրում է համարվում թափոնների մեկուսացումը, որը բացառում է թափոնների հետագա օգտագործումը և ուղղված է դրանց չեզոքացմանը և շրջակա միջավայրում վտանգավոր նյութերի հետագա տարածմանը, մինչդեռ պոչամբարներում կուտակված թափոնները հետագայում ենթակա են վերամշակման:

Միևնույն ժամանակ 2012թ. ուժի մեջ մտած <<Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրք>> ՀՀ օրենքի դրույթների համաձայն օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում ձևավորված, երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում կամ պոչամբարներում օգտակար հանածոյի կուտակումները համարվում են տեխնաժին հանքավայրեր (երկրաբանատնտեսագիտական գնահատական ստանալու պարագայում):



Համաձայն օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ տեխնածին հանքավայրերը Հայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունն են և կարող են օրենքով սահմանված կարգով տրամադրվել շահագործման՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Տեխնածին հանքավայրերի շահագործման համար վճարվում են ընդերքօգտագործման վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդերքօգտագործողի գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքը ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության գործողության ընթացքում պատկանում է տվյալ ընդերքօգտագործողին: Ընդերքօգտագործողն իրավունք ունի առանց լրացուցիչ թույլտվությունների կամ համաձայնությունների ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում օգտագործելու իր գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը կամ այլ անձի փոխանցելու դրանց օգտագործման իրավունքը: Արտադրական լցակույտերն օգտագործողն ընդերքօգտագործման վճարները վճարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդերքօգտագործման իրավունքը դադարելուց հետո արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքն անհատույց անցնում է Հայաստանի Հանրապետությանը, որը կարող է դրանք օգտագործման տրամադրել որպես տեխնածին հանքավայրեր: Արտադրական լցակույտերի նկատմամբ օգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետությանն անցնելուց հետո դրանք կարող են տրամադրվել օգտագործման՝ Օրենքով սահմանված կարգով:

Այնուամենայնիվ՝ պոչամբարները զբաղեցնում են որոշակի տարածքներ, որտեղ կուտակվում են վտանգավոր նյութեր, որոնք աղտոտում են հողը, գոլորշացման արդյունքում՝ մթնոլորտային օդը, հնարավոր է նաև դրանց ներթափանցումը ստորգետնյա ջրեր՝ վնաս հասցնելով շրջակա միջավայրին և մարդու առողջությանը: Հետևաբար, հիմնախնդրի լուծման համար նպատակահարմար է առանձին օրենքով սահմանել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա պոչամբարների հասցրած վնասի փոխհատուցման մեխանիզմներ:

Ինչ վերաբերում է հարստացուցիչ ձեռնարկությունների պոչամբարներում կուտակված թափոնների դասակարգմանն, ապա գունավոր մետաղների հանքահարստացման պրոցեսում առաջացող թափոնները՝ ապարախյուսերը /շլամ/, որոնք հոսում են պոչամբար, դասվում են վտանգավորության 3-րդ դասին և <<Գունավոր մետաղների արտադրության շլամ>> անվանումով /ծածկագիր՝ 3160260004013/ ընդգրկված են ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամաններով հաստատված <<Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկում>> ու <<Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկում>>:

ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հետ կապված (պոչամբարներ, լցակույտեր) տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի և աղբավայրերի բնապահպանական մոնիթորինգի իրականացման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը 2010-2012թթ. ներկայացրել է միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտեր, որոնք համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով չեն իրականացվել, ուստի՝ բացակայում է որևիցե հավաստի տեղեկատվություն ծանր մետաղներով, թունաքիմիկատներով, տարբեր պարարտանյութերի ավելցուկային

քանակություններով կամ այլ տիպի աղտոտվածություն կրող տարածքների բաշխման, ինչպես նաև աղտոտվածության քանակական բնութագրերի վերաբերյալ:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի թիվ 1192-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում տեխնաժին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը>>, որով հետագայում կիրականացվի աղտոտված հողերի, այդ թվում՝ աղբավայրերի մոնիթորինգը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի համաձայն «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» ձև-1 «Թափոն» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվություն պարտավոր են ներկայացնել վտանգավոր թափոններ առաջացնող կամ թափոններ տեղադրող կազմակերպությունները, սակայն տեղեկանքում նշված արդյունաբերությամբ զբաղվող տնտեսվարող 2500 կազմակերպություններից /ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների/ 2009 թվականին 392 կազմակերպություն է ներկայացրել հաշվետվություն, իսկ 2010 թվականին՝ 406: Ակնհայտ է, որ ոչ թե 7 տոկոսն է ներկայացնում վտանգավոր թափոնների վերաբերյալ հաշվետվություն, այլ հաշվառված տնտեսվարող սուբյեկտների շուրջ 20 տոկոսը:

Ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.19 հոդվածի կիրառմանը, ապա այն հնարավոր է կիրառել միայն համապատասխան ստուգումների արդյունքում արձանագրված խախտման դեպքում, իսկ 2009թ. մայիսի 29-ի ՀՀ կառավարության «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» N 594-Ա որոշման 1-ն կետով սահմանված ընթացակարգով սահմանափակվում են ԲՊՏ կողմից իրականացվելիք ստուգումների լիազորությունները:

Լիցենզավորման գործունեության արձանագրված խախտումների վերաբերյալ հայտնում եմ, որ արձանագրվածը վերաբերում է կազմակերպությունների կողմից առանց լիցենզավորման որոշակի գործողությունների իրականացմանը, ինչը հնարավոր էր հայտնաբերել միայն համապատասխան ստուգման միջոցով:

Անդրադառնալով առողջապահության բնագավառում վտանգավոր թափոնների վնասազերծման լիցենզիա ստացած կազմակերպությունների կողմից առանց լիցենզավորման որոշակի գործողությունների իրականացմանը՝ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշման համաձայն հայտատուն մեկ հայտով լիցենզիա էր ստանում նշված բոլոր գործունեության տեսակների համար, 2007 թվականին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների համաձայն հայտատուն յուրաքանչյուր գործունեության տեսակի համար ստանում էր առանձին լիցենզիա, իսկ 2010 թվականին նույն օրենքում կատարված փոփոխությունների համաձայն թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության տեսակները համախմբվել են մեկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակում, այսինքն՝ հայտատուն կրկին մեկ հայտով լիցենզիա է ստանում նշված բոլոր գործունեության տեսակների համար: Այսպիսով հարցը օրենսդրորեն կարգավորվել է:


Ինչ վերաբերում է թռչնաբուծությամբ զբաղվող կազմակերպություններում առաջացող թափոններին, ապա թռչնի ծերտը օգտագործվում է կենսազազ ստանալու նպատակով կամ որպես պարարտանյութ, և այդ մասով բնապահպանական վճար չի գանձվում:

Թափոնների անձնագրավորման գործընթացի վերաբերյալ հայտնում եմ, որ այդ ուղղությամբ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ 2011թ. 304 կազմակերպությունների տրվել է ծանուցում, ինչն էլ նպաստել է, որ 2011 թվականին հաշվառված թափոնների անձնագրերի թիվը կազմել է 239 թափոնի անձնագիր՝ 2010 թվականի 85-ի փոխարեն:

Թափոնների անձնագրավորման և սկզբնական հաշվառման ընթացակարգի պարզեցման հետ կապված հայտնում եմ, որ դրանք իրականացվում են պարզ ընթացակարգերով, որոնք նախատեսում են հաստատված ձևին համապատասխան թափոնի անձնագրի կազմումն ու հաստատումը թափոններ առաջացնողների կողմից՝ այն համաձայնեցնելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ և թափոնների գոյացման փաստացի ծավալների հիման վրա տնտեսվարողների կողմից թափոնների սկզբնական հաշվառման գրքի վարումը, որը պետք է պարունակի ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի <<Թափոնների հաշվառման՝ գոյացման, հեռացման /ոչնչացման, վնասազերծման, տեղադրման/ և օգտահանման կարգը սահմանելու մասին>> N 1343-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով ամրագրված տեղեկատվությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրի և թափոնների հեռացման վայրերի ռեեստրի ստեղծման և վարման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը 24.11.2011 թիվ 5/08/53309-11 և 14.03.2012թ. թիվ 5/08/50654-12 գրություններով դիմել է ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին՝ մարզում (Երևան քաղաքում) առկա թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ու հեռացման վայրերի (աղբավայրերի) վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու և ռեեստրային գրանցման հաշվետվությունները/թերթիկները սահմանված կարգով ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացնելու գործընթացին աջակցելու խնդրանքով:

Հարգանքով՝



Ա. Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

_____ N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 28.02.2012թ. №02/23.14/2449-12 հանձնարարականի և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 04.05.2008թ. №225-Ա որոշման 2-րդ կետի պահանջով ՀՀ վերահսկիչ պալատի 10.02.2012թ. թիվ 3/4 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների օգտագործման (վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում) նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվության» վերաբերյալ հայտնում եմ հետևյալը:

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ և «Առողջության զարգացման կենտրոն» ՍՊԸ կազմակերպությունների ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով նախկինում ստացած վտանգավոր թափոնների վնասազերծման լիցենզիաները հետագայում վերաձևակերպվել են վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիաների՝ համապատասխանաբար ՀՀ կառավարության 22.09.2011թ. №1370-Ա և 17.11.2011թ. №1614-Ա որոշումներով:

ՀՀ կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» № 1739-Ն որոշմամբ պահանջվող «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացնելու հարցը կանոնակարգելու համար ՀՀ առողջապահության նախարարությունը տարածքային կառավարման մարմիններին և Երևանի քաղաքապետարանին շրջաբերական նամակ է հղել՝ բժշկական կազմակերպությունների կողմից «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» վարչական վիճակագրական հաշվետվությունները ժամանակին և սահմանված կարգով ներկայացնելու համար:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2012 թվականին բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարման նկատմամբ իրականացվել են տեսչական ստուգումներ՝ հայտնաբերվել են նշված նորմերի պահանջների խախտումներ, տրվել են առաջադրանքներ և սահմանվել են վարչական տույժեր:

Վտանգավոր թափոնների մասով ՀՀ սանիտարական օրենսդրության լրամշակման անհրաժեշտությունը ընդգրկում է «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» №2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմերում, ինչպես նաև «Բժշկական թափոնների անվտանգ գործածության ուղեցույցում» փոփոխություններ և լրացումներ կատարելը, որի նպատակով ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ



**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

« _____ » _____ 20

№ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2012 թվականի փետրվարի 27-ի N02/23.14/2449-12 հանձնարարականի՝ ներկայացվում է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2012 թվականի փետրվարի 10-ի թիվ 3/2 և թիվ 3/4 որոշումներով հաստատված հաշվետվություններում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը վերաբերող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

Ա. ԵՐԻՅՅԱՆ

Կատարող՝ Է. Կարապետյան

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2012 թվականի փետրվարի 10-ի
թիվ 3/4 որոշումով հաստատված հաշվետվություններում
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը վերաբերող հարցերի վերաբերյալ

Արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում որպես տեխնիկատեխնոլոգիական տվյալ նշել նաև պոչամբարներում առկա վտանգավոր նյութերի կազմը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 09.11.2006թ. «Օգտակար հանածոների որակական անալիտիկ տվյալների հսկողության մասին» թիվ 1678-Ն որոշմամբ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության համակարգի «Անալիտիկ» ՓԲԸ-ի կողմից պոչամբարներում իրականացվող հսկողական անալիզների տվյալները: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.02.2006թ. «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշմամբ հաստատված ցանկում՝ պոչամբարների մասով կատարել համապատասխան լրացումներ:

ՀՀ տարածքում առկա պոչամբարները գրանցված են արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում և ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում փորձագիտական եզրակացությունը կկազմվի պոչամբարներում առկա վտանգավոր նյութերի կազմի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում, ինչն էլ հետագայում հիմք կհանդիսանա ՀՀ կառավարության 16.02.2006թ. «Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին» թիվ 182-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Միաժամանակ, գրությամբ դիմել ենք ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն «Անալիտիկ» ՊԲԸ-ի կողմից պոչամբարներում իրականացվող հսկողական անալիզների տվյալները տրամադրելու համար:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

“.....” 2012թ.

N.....

Հայաստանի Հանրապետության կառավարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին

Ձեր N 02/23.14/2449-12
29.02.2012թ.

Հարգելի պարոն Սարգսյան

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 10.02.2012 թվականի N 3/4 որոշման
հավելվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության մասով,
ներկայացված առաջարկությունները դուրս են նախարարության կանոնադրական խնդիրներից:

Հարգանքով՝

 Վ. ՏՐԳՍՅԱՆ



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« _____ » _____ 20

№ _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ


*Ի կատարումն ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի
31-ի թիվ 02/23.16/795-13 հանձնարարականի*

Հարգելի պարոն Սարգսյան,

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2012 թվականի փետրվարի 10-ի թիվ 3/4 որոշմամբ հաստատված հաշվետվության մեջ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը ներկայացված առաջարկությունների վերաբերյալ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի հավատարմագրման և լիցենզավորման գործակալության կազմում գտնվող արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրում գրանցված՝ վնասակար նյութեր պարունակող թափոններ օգտագործող օբյեկտների (այսուհետ՝ պոչամբարներ) վերաբերյալ, որպես տեխնիկատեխնոլոգիական տվյալ, վտանգավոր նյութերի կազմը նշելու նպատակով, Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության <<Անալիտիկ>> ՊՓԲԸ կողմից իրականացված փորձաքննության արդյունքում կազմված հսկողական անալիզների տվյալներից օգտվել

հնարավոր չէ, որովհետև նրա կողմից իրականացվող հսկողական անալիզները վերաբերվում են հանքերում գտնվող օգտակար հանածոների կազմը պարզելուն և դրանց որակը գնահատելուն, հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1678-Ն (Օգտակար հանածոների որակական անալիտիկ տվյալների հսկողության մասին) որոշում, այլ ոչ թե հանքերին կից պոչամբարներում կուտակված վնասակար նյութերի կազմը կամ դրանց քանակը պարզելուն: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 182-Ն (Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին) որոշմամբ հաստատված ցանկում՝ պոչամբարների մասով համապատասխան լրացում կատարելու վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի առաջարկությունը նույնպես չի ընդունվել, քանի որ այն հակասում է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի (Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենքներին) պահանջին, այսինքն՝ ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 182-Ն որոշման համար հիմք է հանդիսացել <<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի ա) ենթակետի (ա) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած սահմանաքանակները գերազանցող չափերով արտադրվում, վերամշակվում, պահվում, փոխադրվում, օգտագործվում կամ ստացվում են հետևյալ հատկանիշներով բնութագրվող վնասակար նյութերը) և 22-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի (բ) հաստատում է սույն օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված վնասակար նյութերի սահմանաքանակները) պահանջները, այլ ոչ թե <<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի գ) (գ) իրականացվում են հանրադրյունահանման, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանրահարստացման ուղղությամբ), կամ դ) (դ) իրականացվում են թունելաշինական աշխատանքներ կամ ցանկացած այլ աշխատանք ստորերկրյա պայմաններում) ենթակետերի պահանջներից որևիցե մեկը:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ի թիվ 182-Ն (Վնասակար նյութերի սահմանաքանակները հաստատելու մասին) որոշմամբ հաստատված սահմանաքանակի վնասակար նյութեր պարունակող թափոններ օգտագործող բոլոր օբյեկտները՝ պոչամբարները, որոնք գտնվում են ՀՀ տարածքում գրանցված են արտադրական վտանգավոր օբյեկտների պետական ռեեստրում, շահագործվող պոչամբարները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնում են տեխնիկական անվտանգության փորձաքննություն, իսկ չշահագործվողները կոնսերվացված են օրենքով սահմանված կարգով, և անկախ իրենց կարգավիճակից բոլոր պոչամբարները գտնվում են պետական վերահսկողության ներքո:



Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8

Հեռ.՝ (+37410)362015, ֆաքս՝ (+37410)363949

Էլ. փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am